

տիքը տեղի ունեցաւ: Այս Տաճարն էր որ 167 ին (Ն. Ք.) Անտիոքոսէն սրբապղծուեցաւ. երեք տարիէն ան մաքրագործուեցաւ Յուդա Մակաբէի կողմէն, որ այս դէպքին ի յիշատակ հաստատեց նաւախաւաց տօնը:

Յիսուսի ժամանակ գոյութիւն չունէր այս Տաճարը: Հերովդէս ուզելով հրեաներու սէրը գրաւել, փլցուց զայն և ուրիշ մը շինեց մեծ չափով և յունական արուեստի բոլոր կատարելագործութեամբ: Մեր թուականէն 18-20 տարի առաջ սկսելով՝ 9-10 տարիէն աւարտեցաւ: Բայց գաւիթները ամբողջութեամբ աւարտեցան միայն Քրիստոսի 64 թուականին:

Տաճարին պարիսպը շատ մը գուռներ ունէր, ու որոնց զլխաւորը՝ դէպի արեւելք, կը կոչուէր Շուշանի դուռ կամ Գեղեցիկ (Գործք. Գ. 2): Տաճարին սրահները մօզաշէքով զարդարուած էին: Արեւելքի կողմինը կը կոչուէր Սրահ Սողոմոնի: Յիսուս հոն կը շըրջագայէր, հոն քարոզեց Աւետարանը, ինչպէս նաեւ առաքեալները, եւ առաջին քրիստոնեաները հոն կը հաւաքուէին (Յովհ. Ժ. 23-39, Գործք. Գ. 11-26, Ե. 12): Այս սրահներուն տակն էր Տաճարին առեւտուրի տեղը (Յովհ. Բ. 14-17): Այս առաջին գաւիթը բաց էր բոլոր մարդոց, նոյն իսկ օտարներուն, և կը կոչուէր Գաւիթ հեթանոսաց: Տաճարին արեւելեան բաժանումը կը կոչուէր Գաւիթ կանանց, մէջտեղինը՝ Գաւիթ Իսրայէլացոց: Այս վերջին գաւիթները կը բաժնէր պատ մը՝ որուն մէջտեղէն կը բացուէր նշանաւոր պղինձէ դուռը՝ որ կը կոչուէր Նիխսնորի դուռ:

Այս այն Տաճարն էր՝ որուն համար Յիսուս մարգարէացաւ. «Եւ յասել ոմանց զտաճարէն՝ թէ գեղեցիկ վիմօք և աշխարհօք զարդարեալ է, ասէ, զայդ ամենայն զոր տեսանէք՝ եկեսցեն աւուրք յորս ոչ